Հաստատում եմ՝
«Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան»
հիմնադրամի տնօրեն Դ.Գյուրջինյան

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Վիկտորյա Վարդգեսի Մելքոնյանի «Սոցիալական մեդիայի դերը ՀՀ-ում քաղաքական հաղորդակցությունների փոխակերպման պայմաններում» թեմայով ԻԳ 00.01 «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ՄՀՔ ֆակուլտետի ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի 2026թ. հունվարի 20-ի նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչի ժ/պ, փ.գ.թ., ա.գ.թ., դոցենտ Վարդան Ասլանյանը, ի.գ.դ., ք.գ.թ., դոցենտ Արմեն Հարությունյանը, փ.գ.թ., դոցենտ Գևորգ Հակոբյանը, պ.գ.թ., ավագ դասախոս Արմեն Պետրոսյանը, ք.գ.թ., դոցենտ Նարեկ Գրիգորյանը, պ.գ.թ., դոցենտ Գեորգի Միրզաբեկյանը, ք.գ.թ., դոցենտ Մարգարիտ Պետրոսյանը, բ.գ.թ. Վահե Առաքելյանը, ավագ դասախոս Լուսինե Պողոսյանը:

Նիստի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, դրված էր Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 056 մասնագիտական խորհրդին հրապարակային պաշտպանության ներկայացված Վիկտորյա Վարդգեսի Մելքոնյանի «Սոցիալական մեդիայի դերը ՀՀ-ում քաղաքական հաղորդակցությունների փոխակերպման պայմաններում» թեմայով ԻԳ 00.01 «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության քննարկումը:

Ելույթ ունեցավ ատենախոսության գրախոս ք.գ.թ., դոցենտ Մարգարիտ Պետրոսյանը՝ հրապարակելով իր գրավոր կարծիքը: Արտահայտվեցին նաև Ա.Պետրոսյանը, Գ.Միրզաբեկյանը, Վ.Առաքելյանը, Լ.Գրիգորյանը: Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչի ժ/պ Վ. Ասլանյանը:

Քննարկելով Վիկտորյա Վարդգեսի Մելքոնյանի «Սոցիալական մեդիայի դերը ՀՀ-ում քաղաքական հաղորդակցությունների փոխակերպման պայմաններում» թեմայով ատենախոսությունը՝ նիստի մասնակիցները կատարեցին հետևյալ դիտարկումները և նկատառումները.

Վիկտորյա Մելքոնյանի ատենախոսության թեման արդիական է և հեռանկարային, քանի որ արդի քաղաքական հաղորդակցության փոխակերպումներում չափազանց մեծ դերակատարում և կարևորություն է վերապահվում սոցիալական մեդիային: Այդ

դերակատարությունը պայմանավորված է առավելապես ցանցային, քան հիերարխիկ կառուցվածք ունեցող սոցիալական մեդիայի ամենահաս ազդեցությամբ:

Սոցիալական մեդիան արդարացիորեն համարվում է այլընտրանքային հաղորդացության կայացման կարևորագույն հիմքերից մեկը, ինչն էլ, իր հերթին, պայմանավորված է նորագույն տեխնոլոգիաների աննախադեպ ու սրընթաց զարգացման միտումներով, որոնք հեղափոխական ազդեցություն են ունենում՝ նպաստելով առաջընթացի մի շարք ուղղություններով, ինչպիսիք են՝ տվյալների հավաքագրման ու մշակման ժամանակի կրճատումը, տեղեկույթի փոխանցման արագացումը, քաղաքական հաղորդակցության արդյունավետության մեծացումը, որոշումների կայացման արագության էական աճը և այլն: Այս ամենը ուղիղ կամ միջնորդավորված ձևով անմիջական ազդեցություն է ունենում պետությունների ազգային անվտանգության ապահովման կամ միջազգային անվտանգային միջավայրի ձևավորման վրա, քանի որ դրանց բնականոն ու հետևողական զարգացումը պահանջում է տեխնոլոգիական առաջընթացի դիտարկում և նորամուծությունների համալիր կիրառում:

Ավելին, սոցիալական մեդիան վերջին մի քանի տասնամյակներում դարձել է ժողովրդավարացման գործընթացների կարևորագույն գործիքներից մեկը՝ մեծապես փոխելով քաղաքական իշխանության տարբեր սուբյեկտների, քաղաքական գործիչների և քաղաքացիների փոխհարաբերությունները, հաղորդակցման ձևերն ու մեխանիզմները: Այն ընդլայնել է քաղաքական գործընթացներում քաղաքացիների մասնակցության հնարավորություններն ու հիմնական ձևաչափերը՝ թույլ տալով բարձրաձայնել հասարակությանը հուզող խնդիրները կամ ակտիվ մասնակցություն ցուցաբերել հանրային քննարկումներում՝ անկախ սոցիալական դիրքից և գտնվելու վայրից: Վերոշարադրյալը փաստում է, որ քաղաքական հաղորդակցությունների բնագավառում սոցիալական մեդիայի դերի և նշանակության ուսումնասիրությունը բացառիկ կարևորություն ունի:

Ատենախոսության «Սոցիալական մեդիայի դերը ՀՀ-ում քաղաքական հաղորդակցությունների փոխակերպման պայմաններում» վերնագիրը համապատասխանում է դրա բովանդակությանը և կատարված ուսումնասիրության բնույթին: Հետազոտության վարկածը, հիմնական նպատակներն ու խնդիրները, աղբյուրների տեսությունը, թեմայի գիտական ուսումնասիրվածության աստիճանը և գիտական նորույթն ու գործնական նշանակությունը հստակ են ձևակերպված:

Աշխատանքն աչքի է ընկնում գիտական նորույթով, մասնավորապես՝

- Խթանում է զարգացող միջգիտակարգային նոր ուղղության՝ սոցիալական մեդիայի և քաղաքական հաղորդակցության ուսումնասիրությունը հայ քաղաքագիտության մեջ՝ համեմատական անցկացնելով միջազգային փորձի հետ:
- Գիտական գնահատական է տրվում «քաղաքական ապատեղեկատվություն» և «քաղաքական ատելության խոսք» եզրույթներին և դրանցից ծագող մարտահրավերներին ու ռիսկերին:
- Քննվում են հասարակության թվային մասնակցության և միկրոակտիվիզմի հայեցակարգերը և դրանց ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա:

- Կատարվել են արժեքավոր դիտարկումներ քաղաքական մասնակցային վարքագծի և քաղաքական ապատեղեկատվության ու ատելության խոսքի դրսևորումների առնչության վերաբերյալ, առաջարկվել են կարգավորման մեխանիզմներ:

Ատենախոսության կառուցվածքի և բովանդակության ակնարկ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (ութ ենթագլխից), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

- **Ներածության** մեջ հիմնավորել է թեմայի արդիականությունը, սահմանվել են առարկան ու խնդիրները, ուսումնասիրության մեթոդները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:
- Ատենախոսության **առաջին**՝ «Սոցիալական մեդիայի տեսական և գործնական հիմքերը» վերտառությամբ **գլխում** ներկայացվում են աշխատանքում կիրառվող հիմնական եզրույթների տեսական հիմքերը և դրանց փոխհարաբերությունը, քաղաքական համախմբման գործընթացներում սոցիալական մեդիայի ունեցած դերը, հիմնական գործիքակազմերն ու մեխանիզմները: Առանձին ենթագլխով ներկայացվում են քաղաքացիակենտրոն կառավարման և քաղաքական փոխակերպումների վրա սոցիալական մեդիայի ազդեցության հիմնական ուղղությունները՝ դիտարկելով անկախությունից ի վեր ՀՀ-ում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ և քաղաքացիական նախաձեռնություններ՝ «Պահպանի՛ր Մաշտոցի պուրակը» շարժումը, հանրային տրանսպորտի թանկացման դեմ պայքարը, 2018թ. Թավշյա հեղափոխությունը և այլն: Քննարկվում է նոր ձևաչափով մեդիա դիսկուրսը իշխանության և ընդդիմության միջև 2018 թ. հետո ընկած ժամանակահատվածում:
- **Երկրորդ գլուխը**՝ «Սոցիալական մեդիայում առկա բացասական գործոնների վտանգը ՀՀ-ում քաղաքական հաղորդակցության կայացման գործում», քննարկում է առցանց քաղաքական ապատեղեկատվության բնորոշումը և կիրառման դրդապատճառները՝ այն դիտարկելով որպես սպառնալիք պետության ներքին և արտաքին անվտանգությանը, միջամտություն ժողովրդավարացման գործընթացներին և ֆինանսատնտեսական շահերի բախում: Ներկայացվում են նաև ատելության խոսքին և պոպուլիզմին վերաբերող հարցեր, որոնք սոցիալական մեդիայի քաղաքականացման պայմաններում կարող են սպառնալիք դիտարկվել ժողովրդավարական արժեքների, պետության կայունության ու անվտանգության համար:
- «Տեղեկատվական հասարակության զարգացումը՝ որպես Հայաստանում այլընտրանքային քաղաքական հաղորդակցության գրավական» վերնագրով **երրորդ գլխում** դիտարկվում են էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանն ու կիրառմանը վերաբերող խնդիրներ՝ որպես պետություն-հասարակություն հաղորդակցության ապահովման միջոց, ներկայացվում են համակարգի կիրառման

արդյունավետության, ինչպես նաև այդ համակարգից օգտվելու, թվային գրագիտության հետ կապված հարցեր: Այդ հարցերի քննարկման արդյունքում կատարվում են ՀՀ-ում էլեկտրոնային կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված մի շարք առաջարկություններ: Գլխում քննարկվում են նաև քաղաքացիական մասնակցության դերը ժողովրդավարացման գործընթացում, թվային ակտիվության ձևերը (օրինակ՝ միկրոակտիվիզմ) և դրանց ազդեցությունը քաղաքական օրակարգի ձևավորման վրա, ինչպես նաև մեդիագրագիտությանը և տեղեկատվական հասարակության զարգացմանը վերաբերող խնդիրներ:

- **Եզրակացություն:** Ընդհանրացնում է ստացված արդյունքները և սահմանում է սոցիալական մեդիայի մասնակցությամբ քաղաքական հաղորդակցության բազմամակարդակ գործընթացը՝ բազմավեկտոր փոխազդեցությամբ և կապերով, տեղեկատվության շրջանառության ողջ պատկերի հետ մեկտեղ: Առաջարկվում են սոցիալական մեդիայի միջոցով հասարակություն-պետություն քաղաքական հաղորդակցման կայացման ուղենիշներ:

Արդյունքների հիմնավորվածությունը և գիտական արժեքը

Թեկնածուական ատենախոսությունում առկա են եզրակացություններ և գործնական առաջարկներ, որոնք ունեն հստակ գիտատեսական և կիրառական նշանակություն՝ հարստացնելով քաղաքագիտության խնդրային ու առարկայական դաշտը: Ատենախոսությունը համալիր կերպով դիտարկում է սոցիալական մեդիայի ազդեցությունը քաղաքական հաղորդակցությունների փոխակերպումներում՝ վեր հանելով հիմնական ուղղությունները: Ատենախոսության ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել ռազմավարական և հայեցակարգային փաստաթղթերի մշակման ընթացքում (ոլորտային ռազմավարություններ, էլեկտրոնային կառավարման համակարգի բարելավման ծրագիր, տեղեկատվական անվտանգության հայեցակարգ և այլն): Ատենախոսության առանձին դրույթներ կարող են կիրառվել ՀՀ-ում նոր գիտական հետազոտություններում՝ թեմայի հետագա արծարծման նպատակով:

Օգտագործվել է բավականաչափ աղբյուրաբանական և գիտական հենք: Հետազոտությունը միջառարկայական բնույթ է կրում, ինչն արտացոլվում է նաև ուսումնասիրության հիմքում ընկած մեթոդաբանության մեջ: Ատենախոսը կատարել է թե՛ քանակական, թե՛ որակական դաշտային ուսումնասիրություններ, օգտագործել բովանդակային վերլուծության և համեմատական մեթոդներ: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության տեքստին և արտացոլում է դրա բովանդակությունը անհրաժեշտ ամբողջականությամբ: Նյութի ամբողջականությունն ու ճշգրտությունն արտացոլված են հրատարակված 6 գիտական հոդվածներում:

Մեկնաբանություններ և նկատառումներ

Այնուհանդերձ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ատենախոսությունը ավելի կշահեր, եթե հեղինակը նկատի ունենար առաջարկվող հետևյալ դիտողությունները.

1. Հետազոտության «Նպատակը և խնդիրները» բաժնում նշվում է. «Հիմնվելով սոցիալական մեդիայի տեսական-հայեցակարգային մոտեցումների, ինչպես նաև մեզանում սոցիալական մեդիայի կիրառման առաջադեմ փորձի վրա՝ դիտարկված են հնարավոր ռիսկերի և մարտահրավերների իրավիճակային լուծումները քաղաքական գործընթացների թվայնացման պայմաններում»: Սակայն, աշխատանքում հստակորեն չեն առանձնացվում հնարավոր ռիսկերն ու մարտահրավերները, ինչպես նաև իրավիճակային լուծումները: Իրավիճակային լուծումները կարող էին ներկայացվել սցենարային պլանավորման մեթոդի համապարփակ կիրառմամբ:
2. Գիտական նորույթը ներկայացնող այլ կետերի շարքում նշվում է, որ իրականացվել է «քանակական հարցում 18-35 տարեկան երիտասարդների շրջանում Հայաստանի ողջ տարածքում և որակական հետազոտություն Շիրակի, Լոռու, Արագածոտնի մարզերում և Երևանում՝ ֆոկուս խմբերի տեսքով»: Առաջին, ինչպես հեղինակն է նշում, հետազոտությունն իրականացվել է 2020թ.-ին, հետևաբար չի կարող արտացոլել Հայաստանում երիտասարդների շրջանում սոցիալական մեդիահարթակների կողմից քաղաքական ապատեղեկատվության և ատելության խոսքի դրսևորումների հանդեպ արդի վերաբերմունքը, վերջիններիս ազդեցությունը նրանց մասնակցային վարքագծի վրա: Երկրորդ, հետազոտությունն իրականացվել է ՀՀ երեք մարզերում՝ Լոռի Շիրակ, Արագածոտն և Երևանում. ինչպե՞ս է հիմնավորում տվյալ մարզերի ընտրությունը և ինչպե՞ս դա կարող էր ազդել քաղաքական հաղորդակցությունների փոխակերպումների և հետազոտության արդյունքների վրա:
3. Երկրորդ գլխում որպես բացասական գործոն ներկայացվում են առցանց քաղաքական ապատեղեկատվությունը և դավադրապաշտական տեսությունները: Ցանկալի կլիներ խնդիրը դիտարկել ավելի լայն՝ հիբրիդային և տեղեկատվական պատերազմների համատեքստում՝ քաղաքական հաղորդակցությունների վրա սոցիալական մեդիայի ազդեցությունը գնահատելով ոչ միայն ներքին, այլև արտաքին քաղաքական դաշտում՝ շեշտադրելով անվտանգային միջավայրի ձևավորման վրա սոցիալական մեդիայի հնարավոր ազդեցության ձևերը և ուղղությունները, ազդեցության չեզոքացման հիմնական միջոցները:
4. Աշխատանքում անդրադարձ է կատարվել էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ու զարգացման խնդրին (3.1 ենթագլուխ)՝ որպես պետություն-հասարակություն հաղորդակցության կազմակերպման ձևի: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը ներկայացներ այդ ոլորտում առկա փորձը առաջատար պետությունների օրինակով՝ այդպիսով նաև ուրվագծելով ձախողումների պատճառներն ու զարգացման հեռանկարները: Համեմատական վերլուծության իրականացումն էլ հնարավորություն կընձեռեր վեր հանել որոշակի օրինաչափություններ և բացահայտել խնդիրների հիմնական շրջանակը:

5. Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի որոշ խնդիրներ, տառասխալներ, բացթողումներ: Պահպանված չէ հղումների միօրինակությունը, գրականության ցանկը ևս ձևավորված չէ միօրինակության սկզբունքով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ամբողջական գիտական արժեքը: Հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու իրականացված հետազոտական աշխատանքը, վերջնարդյունք եզրահանգումները և առաջարկությունները, կարծում ենք, որ Վիկտորյա Վարդգեսի Մելքոնյանի քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Սոցիալական մեդիայի դերը ՀՀ-ում քաղաքական հաղորդակցությունների փոխակերպման պայմաններում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակը արժանի է ԻԳ 00.01 «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ ք.գ.թ. գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ԲՊՀ ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի 2026թ. հունվարի 20-ի թիվ 5 նիստում:

Վարդան Ասլանյան
Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի
ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ժ/պ

«Փ.գ.թ., ա.գ.թ., դոցենտ Վարդան Ասլանյանի ստորագրությունը հաստատում եմ»:
ԲՊՀ գիտական քարտուղար՝ Հասմիկ Փիլավջյան

Տեղեկություններ առաջատար կազմակերպության մասին.
Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան
Հասցե՝ ք.Երևան 0002, Թումանյան 42,
Հեռ.՝ (010) 522 020
21.01.2026